

Այսպէս, հայը խիստ կարեւոր տեղ ունէր Պարսկաստանի վաճառականութեան պատմութեան մէջ եւ իր դիրքը նախանձելի էր ոչ միայն Շահ Աբբաս Մեծի օրով, այլ անկէ ալ առաջուան ժամանակներուն: Իր առեւտուրով հայը Պարսկաստանի տուաւ տնտեսական հաստատութիւն եւ բարգաւաճում՝ այդպիսով խոշոր նպաստ բերելով Պարսիկ մշակոյթին եւ արուեստին ժՁ եւ ժԷ դարերուն: Հայը Պարսկաստանի հայթայթեց ոչ միայն ուղղակի արուեստագէտներու եւ արհեստաւորներու բազմութիւն մը, այլև արուեստներու պահպանման եւ զարգացման համար կենսական նիւթական հարստութիւնը: Պարսկաստան քնականէն ոչ հարուստ եւ ոչ ալ ինքնարաւ էր գոնէ Սաֆաւեան շրջանի ճոխութեան հասնելու չափ: Զուրկ էր ոսկիէ: Հայերը իրենց առեւտուրով լեցուցին երկիրը ոսկիով ու արծաթով եւ թոյլ տուին արուեստի այն շոյալութիւնը, որուն վրայ այսօր կը զմայլինք:

Նոյն ատեն հայը հեռուոր հրապարակներուն հայթայթեց Պարսկական փնտռուած, բայց այլապէս դժուարաւ հայթայթելի մետաքսը: Սակայն, այս մետաքսին մշակութեան համար իսկ կը վկայուի, որ Շահ Աբբաս 20,000-է աւելի հայութիւն մը բռնի գաղթի ենթարկեց: Դժուար է առ այժմ աւելի մանրամասնութեամբ ճշդել, բայց որոշ է, որ ինչպէս առեւտուրին, նոյնպէս արտադրութեան մէջ հայերը գլխաւոր դերակատարներն եղան Պարսկական մետաքսի պատմութեան մէջ:

1500-1600-ի շրջանին Անգլիական մանրա-

կ'ընեն եւ որոնք հոն կը բերեն թիթեղ, պղինձ, Անգլիական եւ Հնդկական ասուեղէն, նոյնիսկ Պէռիի (Berry, France) եւ Սօի (Saux) ասուեղէնք: Պարսիկները, որ բրդեղէն կերպաններու արտադրութեան մէջ լաւ չեն, մեծապէս կը գնահատեն ատոնք, որով հասարակ ասուեղէնը հոն կը ծախուի եւրոպան 20 կամ 24 դրամով: (London, 1662, Vol. I, էջ 234: Ան կը վկայէ նաեւ, որ երբ Շահ Իսմայիլ (1499-1525) վրաստանը նուաճեց, անոր թագաւորը ստիպուած էր տարեկան 300 հակ մետաքս տալ: (Անդ՝ էջ 334)

պատում վաւերադրութիւնները Գիլանը չեն յիշեր իրր մետաքսի արտադրութեան կարեւոր շրջան: Սակայն, կը յիշեն Հին Զուղայէն մինչեւ Գանձակ, Երեւանի դաւառը, Թիֆլիսի հայակեղրոն շրջանը, Շամախը մինչեւ Շիրվան, Հին Նախիջևանն եւ Օրտուպատը (Վերին Աղուլիս) մէջը առնելով: Ատոնք խիտ կերպով հայերէ բնակուած էին, եթէ Հայաստանի մաս չէին կազմեր: Թող որ ամբողջ Կովկասը

2) S. G. W. Benjamin, Persia and the Persians (London, 1887) կը վկայէ. «1290-ին ատենները Մարքո Բոլո, խօսելով Կասպից Ծովու մասին, կ'ըսէ. — «Ճէնովացի վաճառականները կարճ ժամանակ առաջ անոր նաւարկութիւնը սկսան, ուրկէ կուգայ Դելէ (Ghell) կոչուած մետաքսը, այսինքն՝ մետաքս Գիլանի դաւառէն, Հիւսիսային Պարսկաստան»:

«Ֆլորէնցի Balducci Pegolett Tratto Della Marcatura, 1335-ին հրատարակած գործին մէջ նոյնպէս կը խօսի Գիլանի մետաքսի մասին (Seta Ghella)

Անգլիացի R. Chancellor Մոսկուա ճամբորդեց 1553-ին, եւ իր ընկերը, A. Jenkinson, որ մինչեւ Բուխարա թափանցեց 1556-ին, տեղեկագրեց Շիրվանի շրջանի (Կովկաս) մետաքսի առեւտուրի մասին Նիդհարէթ թագուհիին, որ զինքը Պարսկաստան ղրկեց 1562-ին, երբ ան այցելեց Իերբենդ, Շամախ եւ Ղազվին, Պարսկաստանի մէջ: Եւ Edwards, ուրիշ Անգլիացի մը, որ հետեւեցաւ Jenkinson-ի 1567-ին, տեղեկացուց թէ Գիլանի մետաքսը աւելի լաւ եւ բազդատարար աւելի աժան է Կովկասի մետաքսէն. որով հաստատեց գործարան մը Ռէչդի մէջ, մինչ Chapman, իր ընկերը, ճամբորդեց եւ հետախուզեց Գիլանը 1568-ին: Առաջին Անգլիական նաւը, եւ հաւանարար եւ վերջինը, Կասպից ծովուն վրայ ծփած 1573-ին, եւ մետաքսով Աստրախան ղրկուած է: Այս ուղարկումը անյաջող էր, ինչու որ կողք ծովահէններ Վոլկայէն կողպտեցին նաւը իր բոլոր պարունակութեանէն: Wolland, քիչ յետոյ, գործարաններ ունէր Հորմուզի մէջ»: (էջ 414-415)

Գարձեալ 1638-ի ատենները «Գիլան կ'ար-